

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Վաղարշապատ համայնքում թվով 96 տնտեսություն զբաղվում է անասնապահությամբ, որոնք համայնքի արոտային տարածքներով ապահովված չեն: Ըստ տեղաբաշխվածության, ռելիեֆային գործոնով, ծովի մակարդակի բարձրությամբ պայմանավորված, արոտավայրերը տարածված են ցածրադիր գոտիներում, որոնց բուսածածկի և բուսականության կազմը միմյանցից չեն տարբերվում, բոլորը գտնվում են նույն տնտեսական վիճակում և ունեն նույն արդյունավետությունը:

Ցածր մթերատվության հիմնական պատճառը կենդանիների թերսնումն է, որը հիմնականում կոմպենսացվում է մսուրքային պահվածքով՝ չոր զանգվածի կերակրմամբ, իսկ խոշոր տնտեսավարողներն իրենց անասնազխաքանակը տեղափոխում են բարձրադիր գոտիներ /նախալեռնային շրջաններ/:

Համայնքի վարչական տարածքներում գյուղատնտեսական հողերը կազմում են 3576,46հա, արոտավայրերը՝ 37,09հա, խոտհարքերը համայնքում բացակայում են իսկ այլ հողատեսքերը՝ 486,76հա:

Համայնքում հաշվառված է 6831 գլուխ մանր եղջերավոր և 1708 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնցից՝ 406 գլուխը կաթնատու կովեր:

Գյուղ. կենդանիների պայմանական խոշոր միավորի /ՊԽՄ/ վերածման հաշվարկ՝

Գյուղատնտեսական կենդանիներ	Գլխաքանակ	Փոխակերպման գործակից	Պայմանական խոշոր միավոր /ՊԽՄ//գլուխ/
Կով	406	1	406
ԽԵԱ	1302	0,75	976
Ոչխար	6831	0,14	956
Ընդամենը			2338

Համաձայն հաշվարկի, համայնքում հաշվառվել է շուրջ 2338 պայմանական խոշոր միավոր /ՊԽՄ/: Յուրաքանչյուր գլուխ ՊԽՄ-ին օրական անհրաժեշտ է 10 կգ չոր զանգված կամ 40 կգ արոտականաչ:

Հաշվարկը կատարվել է 1 պայմանական խոշոր եղջերավոր անասունի քաշը ընդունելով 400 կգ, այն բազմապատկվում է 0,025 գործակցով, որը համարժեք է 10 կգ չոր զանգվածին, որն էլ իր հերթին

համարժեք է 40 կգ կանաչ զանգվածի և արոտային շրջանի տևողությանը, հաշվում ենք ողջ անասնագլխաքանակի /ՊԽՄ-ի/ կերի պահանջը՝ ողջ արոտային շրջանի համար:

Աղյուսակ 2:

ՊԽՄ-ի գլխաքանակը	ՊԽՄ-ի կենդանի միջին քաշը /կգ/	1 գլխի կերի /ՉՉ/ օրական պահանջը /կգ/	Ընդհանուր ԽՄ-ի օրվա կետի պահանջը /կգ/ /1x3/	Արոտային շրջանը /օր/	Ընդհանուր ՊԽՄ-ի կերի /ՉՉ/ պահանջն արոտային շրջանում /կգ/ /4x5/
2338	400	10	23380	200	4676000

Ողջ արոտային շրջանում /200 օր/ անասնագլխաքանակի կերի չոր զանգվածի կերի պահանջը կազմում է 4676 տոննա կամ  $4676 \times 4 = 18704$  տոննա կանաչ զանգված:

Հողային ֆոնդում արոտները կազմում են 37,09հա, գլխաքանակի փաստացի խտությունը հավասար է ՊԽՄ գլխաքանակ՝  $2338 : 37,09 = 63,03$  գլուխ: Այսինքն, 1 գլուխ ՊԽՄ-ին բաժին է ընկնում 1հա :  $63,03 = 0,0159$  հա արոտավայր:

Արոտավայրերի ելակետային գնահատումով /մշտադիտարկում/ պարզաբանված արոտի իրավիճակի ցուցանիշը /ԱԻՑ-ն/ հաշվարկելուց պարզվել է, որ համայնքի արոտավայրերն ունեն նույն արդյունավետությունը, նույն էրոզիայի հակման ցուցիչը և նույն արոտի դեգրադացիայի ցուցիչը ԱԴՑ: Քանի որ համայնքի արոտավայրերը գտնվում են ցածրադիր գոտում, միջին դեգրադացվածության արոտի ցուցանիշը կազմում է 5 կշռային արժեք և թույլատրելի բեռնավորման նորմը կազմում է 0,6 ՊԽՄ հա կամ յուրաքանչյուր 1 գլուխ ՊԽՄ-ին անհրաժեշտ է  $1:06 = 1,7$ հա արոտավայր: Արոտի իրավիճակի ցուցանիշով ձեռքբերված արդյունքները համադրվում են արոտի թույլատրման բեռնավորման նորմի ԱԹԲ-ի պարզաբանման հետ, վերջինիս հաշվարկման հիմքում ընկած է արոտի բերքահավաքը:

Ցածրադիր գոտիների արոտավայրերի միջին բերքատվությունը / կանաչ զանգված/ կազմել է 4000 կգ/հա:

$$P = 4000$$

Արոտի թույլատրելի բեռնավորումը՝ ԱԹԲ = ----- = ----- = 0,5 գլուխ/հա

$$N \times S = 40 \times 200$$

Ելնելով ԱԻՑ-ից և արոտի թույլատրելի նորմի արժեքներից, հաշվարկվում է արոտի պահանջը, հասկանալու համար, արդյո՞ք համայնքի արոտավայրերն իրենց տարածքով և բերքատվությամբ բավարարում են առկա անասնագլխաքանակի արոտակերի պահանջը:

$$2338 \times 40 \times 200$$

Արոտի տարածքի պահանջը = ----- = 46760հա

$$4000$$

Համայնքում առկա անասնազվխաքանակի արոտակերի պահանջը ողջ արոտային շրջանում հնարավոր է բավարարել 46760հա արոտավայրերով:

Նաև պետք է հաշվի առնել, որ բերքատվության միջին ցուցանիշով հաշվարկը կարող է որոշակի ռիսկեր գործնականում առաջացնել, մոտավորապես արոտականաչի որակի և ուտելիության հետ կապված, ինչը կարող է բերել գյուղատնտեսական կենդանիների թերսնման:

Համայնքի արոտային տարածքները չեն բավարարում առկա անասնազվխաքանակի կերի պահանջները, ինչի արդյունքում ամռանը և ուշ աշնանը արոտի նպատակով որպես այլընտրանք օգտագործվում են մշակովի և անմշակ վարելահողերը, մնացորդային խոզանը՝ վերաճած ահլուկը / բերքահավաքից հետո/, ինչպես նաև այլ հողատեսքերի բուսածածկը:

Մեր օրինակում յուրաքանչյուր գլուխ ՊԽՄ-ին անհրաժեշտ է 1:0,5 = 2հա:

Համայնքում առկա 37,09հա արոտավայրերի պարագայում և հաշվի առնելով ՊԽՄ-ին անհրաժեշտ տարածության արոտավայրը՝ 2հա /հաշվարկում ենք արածեցման օրերի քանակը՝  $37,09 : 2 = 18,545$ :

ՊԽՄ-ի օրվա կերի պահանջի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝

$$37,09 \times 4000$$

$$\text{-----} = 3709 \text{ օր /1ՊԽՄ/}$$

40կգ

$3709 : 2338 = 1,59$  օր:

Այսպիսով, հաշվի առնելով վերը բերված հաշվարկները՝ հանգում ենք այն եզրակացությունը, որ համայնքում առկա արոտավայրերի տարածքները չեն բավարարում առկա անասնազվխաքանակին և այդ իսկ պատճառով տնտեսավարողների հիմնական այն մասը, որոնց անասնազվխաքանակը մեծ է, արոտային շրջանում տեղափոխվում են բարձրադիր շրջաններ, իսկ այն տնտեսավարողները, որոնց անասնազվխաքանակը մեծ չէ, իրականացնում են մսուրքայի պահվածք: